«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան,Հովսեփյան փող.24/3 06.10.2015թ.

Համաձայն «Ակվատուս»ՍՊԸ-ի 02.09.2015թ-ի,սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին,բողոքի հիմքով ս/թ-ի Հոկտեմբերի 06-ին հրավիրված Կարգապահական Հանձնաժողովի նիստ.

ՍԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Հովհաննես Եղյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը.
Հանձնաժողովի անդամ՝Աշոտ Խաչատրյանը.
Հանձնաժողովի անդամ՝Տիգրան Հարությունյանը

Սնանկության գործերով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանը.
Բողոքաբեր՝ «Ակվատուս»ՍՊԸ լիազորված ներկայացուցիչ՝փաստաբան Միքայել Յուրիի Ավետիսյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«Ակվատուս»ՍՊԸ-ի 02.09.2015թ-ի,«ՆՕԵՄ» ՍՊԸ,սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Նիստը բացեց Հանձնաժողովի նախագահ՝Հովհաննես Եղյանը և ներկայացրեց 18.09.2015թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ մուտքագրված դիմումը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:
Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կաղմ – 4
Դեմ – 0
Ձեռնպահ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ -«ՆՕԵՄ»ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանի նկատմամբ «Ակվատուս»ՍՊԸ-ի,02.09.2015թ-ի բողոքի հիմքով,հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Բողոքաբեր՝ «Ակվատուս» ՍՊԸ լիազորված ներկայացուցիչ՝փաստաբան Միքայել Յուրիի Ավետիսյանին,որը ներկայացնելով բողոքը հայտնեց,որ «Ակվատուս»ՍՊԸ-ի և սնանկ ճանաչված «ՆՕԵՄ»ՍՊԸ-ի միջև 27.04.2009թ-ին կնքվել է առուվաճառքի նախնական պայմանագիր,որից հետո կնքվել է՝ք.Երևան,Արշակունյաց պող.125/5 հասցեյի անշարժ գույքի 1/2 -րդ մասի առուվաճառքի պայմանագիր,որը ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում:Պայմանագրով սահմանված անշարժ գույքի ամբողջ արժեքը՝14000000 ՀՀ դրամ փոխանցման եղանակով վճարվել է:
31.01.2014թ-ին «ՆՕԵՄ»ՍՊԸ –ն ճանաչվել է սնանկ,որի սնանկության գործով կառավարիչ նշանակված Անդրանիկ Ելինյանը,դիմելով «Ակվատուս»ՍՊԸ-ին պահանջել է վերնշված գործարքի վերաբերյալ տեղեկատվություն:«Ակվատուս»ՍՊԸ-ի կողմից,ինչպես բանավոր, այնպես էլ՝29.08.2014թ-ին,գրավոր սնանկության գործով կառավարչին է ներկայացրել , տրամադրել գործարքի իրավական հիմքերը և վճարման փաստաթղթերի լուսապատճենները:

Սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանը,այնուամենայնիվ,վերքոգրյալ փաստաթղթերի և «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի հիմքով, հայցով դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով,միաժամանակ ներկայացնելով միջնորդություն հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին,խնդրելով դատարանին արգելել գույքի տնօրինումը և վարձակալության տրամադրումը,որը դատարանը բավարարել է:

Դատարանը քննել է հայցադիմումը և 02.07.2015թ-ին կայացրած ԵԿԴ 4414/02/2014 վճռով մերժել է «ՆՕԵՄ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանի հայցը:

Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

«Այսպիսով Անդրանիկ Ելինյանը քաջատեղյակ լինելով գործարքի փաստական և իրավական նյութերին,կոպտորեն խախտելով «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի պահանջները,հայցապահանջի ներկայացման ժամկետների խախտմամբ ներկայացրել է վերոնշյալ իրավանորմի շրջանակներից դուրս հայցապահանջ,որով մեր ընկերությանը պատճառել է նյութական վնաս/փաստաբանական ծառայությունների վճար,անշարժ գույքի վարձակալության տրամադրման արգելանք ,ինչպես նաև վնասել է «Ակվատուս» ՍՊԸ-ի բարի համբավը և գործնական հեղինակությունը/:

Բողոքաբերի ներկայացուցիչը նշեց,որ իր պաշտպանյալը չի պահանջում նյութական վնասի փոխհատուցում, բայց գտնում են,որ հիմք ունեն պահանջելու սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանին պատասխանատվության ենթարկելու համար և ակնկալում են Կարգապահական հանձնաժողովից արդարամիտ արձագանք սույն բողոքին:

Հանձնաժողովի նախագահ՝Հ.Եղյանը դիմելով հանձնաժողովի անդամներին խնդրեց բողոքաբերի ներկայացուցչին,դիմումի վերաբերյալ և սնանկության գործով կառավարչին,խնդրո առարկա գործի վերաբերյալ,հարցերի առկայության դեպքում,հարցերը ուղղել հասցեյատերերին և դա կատարել հերթականությամբ:

Հանձնաժողովի անդամ Տ.Հարությունյանը ձայն խնդրեց և հարց ուղղեց բողոքաբերի ներկայացուցչին՝առ այն,որ բեղոքում գրված է.

-Անդրանիկ Ելինյանը քաջատեղյակ լինելով գործարքի փաստական և իրավական նյութերին, կոպտորեն խախտելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի պահանջները ... ՀԱՐՑ՝Մասնավորապես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի որ պահանջներն են խախտվել հայցադիմումում:

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ փաստաբան Միքայել Յուրիի Ավետիսյանը պատասխանեց,որ բեղոքում պարզ նշված է թե որ պահանջն է խախտվել,մասնավորապես խախտվել է հայցապահանջի ներկայացման ժամկետները և ընդհանրապես ներկայացրած հայցադիմումը իրավանորմի շրջանակներից դուրս է:

Հանձնաժողովի անդամ Տ.Հարությունյանը հարց ուղղեց սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանին.

ՀԱՐՑ՝Ներկայացված հայցադիմումի հայցապահանջը,որ իրավանորմերով է հիմնավորված և ինչ դրդապատճառներ են հանդիսացել տվյալ հայցապահանջի ներկայացման համար:

Սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանը պատասխանեց,որ դրդապատճառները տարբեր են,որոնք առաջանում են հիմնականում սնանկության վարույթի ընթացքում օրենքով սահմանված կառավարչի գործառույթները կատարելու ընթացքում կատարվող փաստաթղթերի ուսումնասիրություններից,պարտապանի և այլ պարտատերերի հետ կատարվող աշխատանքների արդյունքում և պետք է նաև նշել որ սնանկության վարույթը դա նույպես դատական վարույթ է,իսկ դատական վարույթը վարում է դատավորը,որին էլ հաշվետվությունների կարգով ներկայացվում է սնանկության գործի ընթացիկ հարցերը և բնական է քննարկվող հարցերի շուրջ ստացվում են որոշակի իրավական կարծիքներ,որոնք էլ ամբողջական կարգով ազդում են սնանկության վարույթի ընթացքում այս կամ այն հայեցողական որոշումներ կայացնելու վրա:

Ինչ վերաբերում է սույն հայցապահանջին,ապա այն հիմավորված է կառավարչի լիազորություններով և Քաղաքացիական օրենսգրքի մի շարք հոդվածներով,իսկ ***«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով,*** հիմքեր բերված չեն:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին բողոքը ,ճշտումների կարգով.տարբեր հարցեր պարզաբանեցին,սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի և բողոքաբերի ներկայացուցչի հետ,որից հետո ելույթի համար ձայն վերցրեց հանձնաժողովի նախագահ՝ Հ. Եղյանը և մասնավորապես նշեց,որ.

- Սնանկության վարույթը դա մի ուրույն դատական վարույթ է,որտեղ իրավահարաբերությունները հավասարակշռված են պարտատերերի և պարտապանի տարբեր իրավունքներով և պարտականություններով ,որոնց մի մասի իրականացումը դրված է կողմերի իսկ մի մասն էլ լիազորությունների տեսքով դրված է սանկության գործով կառավարչի վրա,որի իրականասումը կառավարիչը շատ դեքերում պետք է կատարի ինքնուրույն,բայց քանի որ ինչպես նշվեց,որ սնանկության վարույթը դա դատական վարույթ է և կա գործը վարող դատավոր,ուստի իրավական բնույթ կրող հարցերի վերաբերյալ իրականության մեջ,հաշվետվությունների տեսքով խորհրդակցվում է դատավորի հետ,որը օգնում է կառավարչին իր լիազորությունների իրականացման մեջ:

Տվյալ դեպքում իր կարծիքով սնանկության գործով կառավարիչը գործի փաստական հանգամանքների ամբողջական ուսումնասիրություն կատարելով հաշվի չի առել, դատական պաշտպանության վաղեմության ժամկետի անցնելու հանգամանքը,որը և պատճառ է հանդիսացել ԵԿԴ 4414/02/2014 քաղ,գործով պահանջը մերժելու համար:Պետք է նշել նաև այն հանգամանքը որ դատարանը վերոգրյալ քաղ,գործով չի անդրադարձել հայցապահանջի հիմքերի և չի քննել դրանք,ուստի այս հանձնաժողովի նիստի իրավասությունն չէ քննարկելու այդ հիմքերի հիմնավորվածությունը և կատարել եզրակացություններ:

Բայց մի բան ակհայտ է՝համաձայն «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի»Կանոնների 3-րդ հոդվածի.

-Իր մասնագիտական գործունեությունը իրականացնելիս կառավարիչը պարտավոր է՝ ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ,Ինքնակարգավորվող կազմակերպության և սույն կանոններով սահմանված նորմերի պահանջներին,լինել սկզբունքային և օրինապահ,հարգել իր վարույթում գտնվող գործերի բոլոր մասնակիցների օրինական շահերը,պատիվը,արժանապատվությունը և գործարար համբավը:

7-րդ հոդվածի 2-րդ կետ.

-Կառավարիչը պարտավոր է սնանկության ընթացակարգերում զգուշավորություն հանդես բերել, թույլ չտալ գործողությունների կոնկրետ տեսակների համար ընդունելի ռիսկի աստիճանի գերազանցում:

ըր այս էթիկայի կանոնների համդրությամբ և վերլուծությամբ,սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի գործողություններում առկա են եղել ռիսկեր մյուս կողմի գործարար համբավին որոշակի վնաս պատճառելու,չնայած կողմը չի պնդում վնասի փոխհատուցման հարցը:Պետք է նշել նաև,որ շատ դեպքերում գործի փաստական ռիսկերի գնահատման ընթացքի վրա ազդում են նաև պարտատերրի իրավունքների և պահանջների բավարարման խնդիրները, որոնք շատ դեպքերում ուղղակի ստիպում են սանանկության գործով կառավարչին կատարել նաև այնպիսի գործողություններ,որոնք իրենց մեջ պարունակում են նաև ռիսկեր այլ կողմերին, որոշակի անհարմարություններ պատճառելու հարցում:

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կաղմ – 4

Դեմ – 0

Չեռնպահ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի»Կանոնների 3-րդ հոդվածի և 7-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով «Կարգապահական վարույթի անցկացման Կարգի» 4.2 հոդվածի կարգով՝Սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանին հայտարարել նկատողություն:

2.Սույն Որոշումը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

3.Եռօրյա ժամկետում սույն որոշման օրինակը ուղարկել կողմերին:

Հանձնաժողովի Նախագահ՝Հ.Եղյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Ա. Խաչատրյան